DOI: 10.54503/1829-4324.2024.2-340

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 20.09.24, ուղարկվել է գրախոսման՝ 27.11.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Միգրացիայի ռիսկերի դրսևորումները զարգացած երկրներում զգալիորեն տարբեր են զարգացող երկրներում համանման ռիսկերի դրսևորումներից, դրանք նաև չափազանց դժվար կանխատեսելի, դժվար կառավարելի և դժվար հաղթահարելի են: Դրդապատճառները ավանդականից ենթարկվել են բովանդակային փոփոխությունների՝ հանգեցնելով դրական ու բացասական վերջնարդյունքների, դրանով առաջ բերելով քաղաքականության մշակման ու իրականացման նոր մարտահրավերներ: ՀՀ-ում տարբեր փուլերում ու դիտարկվող տարիներին էմիգրացիային նպաստող գործոններ են գործազրկության բարձր մակարդակով և ցածր վարձատրվող աշխատանքով պայմանավորված տնտեսական վիճակը: ՀՀ-ից սկիզբ առնող էմիգրացիոն հոսքերի մեջ գերակշիռ մասը աշխատանքային միգրացիան է: Բացի այդ Հայաստանում տարբեր նպատակներով բնակություն են հաստատել բազմաթիվ օտարերկրացիներ՝ պետությունը վերածելով նաև իմիգրանտ ընդունող երկրի: Այս ոլորտում միջազգային փորձի հաշվառմամբ՝ առաջնային է համարվում երևույթի կառավարման ու կարգավորման նոր մոտեցումները, որով պայմանավորված է ուսումնասիրության **արդիականությունը**:

Հետևաբար, **հոդվածի նպատակն** է ընդգծել միգրացիայի առաջ բերած մարտահրավերները և կարևորել պետական կողմնորոշվածությունը քաղաքականության իրականացման գործընթացում:

Նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ **խնդիրները**.

- բացահայտել միջազգային գլոբալ զարգացումների ազդեցությունը միգրացիոն գործընթացներ վրա,
- առանձնացնել միջազգային միգրացիայի առավելություններն ու սպառնալիքները, որոնք ազդում են երկրների տնտեսական և քաղաքական զարգացման վրա.
- ընդգծել գործընթացի միջազգային իրավական կարգավորման դերը ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ:

Գրականության ակնարկ: Միգրացիան որպես քաղաքական, տնտեսական և հասարակական երևույթ ունի իր պատմական զարգացման էվոլյուցիան: Եթե նախկինում զանգվածային այդպիսի տեղաշարժը պարտադրված էր ու կատարվում էր շահագործման նպատակով, ապա ժամանակակից աշխարհում մարդիկ հիմնականում դիմում են միգրացիայի իրենց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար: Ըստ Սթահլի միգրացիայի տեսությունները կարելի

է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի ներկայացուցիչները միգրացիայի երևույթը դիտարկել են բազմավեկտոր տեսանկյունից (Կաստլե և Միլլեր, 1993թ., Ռուսելլ և Թեյերբան 1993թ., Ստալկեր, 1994թ.,): Երկրորդ խմբի ներկայացուցիչները (Մասեյ, 1993թ.) կենտրոնացել են էմիգրացիան բացատրող հիմնական գործոնների վրա[1]: Ապագայի նկատմամբ հավատի կորուստը լուրջ հիմք կարող է լինել հայրենիքից հեռանալու համար: Նրանց համար արտասահմանում հոգեբանական կամ այլ ոչ տնտեսական գործոնների ազդեցությամբ պայմանավորված կորուստները շատ ավելի նշանակալից կլինեն: Նման իրավիճակում մարդու վրա հոգեբանական արագ ազդող գործոնները ավելի ակտիվ են լինում:

Ուսումնասիրելով Գիդենսի աշխատանքը Ռիչմոնդը (1994) առանձնացնում է այն գործոնները, որոնք խթանում կամ զսպում են միգրացիայի երևույթը: Նկարագրում է միգրացիան զսպող ու այն ակտիվացնող գործոնները, որոնք արմատանում են մարդկանց կյանքում ու դառնում միգրացիոն երևույթի շարժիչ ուժ: Ռիչմոնդը այն անվանում է ակտիվ, ռեակտիվ միգրացիա՝ ձևավորվող նախատրամադրող գործոնների ազդեցությամբ: Այս մոտեցման մեջ Վան Հիրը (1998) ներմուծելով նոր գաղափար՝ նախատրամադրող, անմիջական, արագացնող և միջանկյալ գործոնները անվանեց "միգրացիոն կարգեր": Ըստ այս տիպի կարգերի, միգրացիան պայմանավորված է նաև անվտանգության կամ մարդու իրավունքների պայմանների վատթարացմամբ, բռնաճնշումներով կամ ոտնձգություններով, քաղաքական հակամարտությունների սրումներով, զանգվածային սպանություններով, պատերազմի սպառնալիքով[2]: Կարելի է նշել, որ հենց այս գործոնները կարող են շարունակել ազդել հայրենիքից հեռանալու որոշումներ կայացնելու մեջ, իսկ հետագայում՝ հետ մղելու արտագաղթի գաղափարը:

«Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ» հետազոտությունում հեղինակները միգրացիոն ռիսկերը դիտարկել են մարդկային կապիտալի վերարտադրման համատեքստում ու կարևորել են մարդկային կապիտալի վրա միգրացիայի ռիսկերի բացասական ներազդեցության կանխարգելմանն ուղղված հատուկ նպատակային քաղաքականությունը: Ինչպես փաստում են հեղինակներ Հ. Մարզպանյանը, Ռ.Մարկոսյանը, Ն. Խաչատրյանը այդ ռիսկերը շուկաների գլոբալացման, կապիտալի և աշխատուժի շարժունության ակտիվացման պայմաններում կարող են վերաճել ազգային անվտանգության սպառնալիքների[3]:

---

[1] Stahl, C., Theories of International Labor Migration: An Overview. Asian and Pacific Migration Journal, 4(2-3), 1995 , 211–232, doi:10.1177/011719689500400203

[2] Fokkema, T., Haas, H., Pre-and Post-Migration Determinants of Socio-Cultural Integration of African Immigrants in Italy and Spain. International Migration, 53: 2015, 3-26. https://doi.org/10.1111/j.1468-2435.2011.00687

[3] Մարզպանյան, Հ., Մարկոսյան, Ռ., Խաչատրյան, Ն., Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ,

«Հետադարձ միգրացիա և Վերաինտեգրման խնդիրներ. Հայաստան» աշխատության մեջ Հ. Չոբանյանը հետդարձի հիմնական խոչընդոտներ է համարել գործազրկության, աշխատանք գտնելու, սոցիալ-հոգեբանական, պարտադիր զինծառայության հետ կապված խնդիրները: Հեղինակը մանրամասն տվել է հետդարձի քաղաքականության կոնկրետ ուղղությունները Հայաստանում՝ կարևորելով ներդրումների իրականացումը, կրթության որակի բարձրացումը, առողջապահական ծառայությունների որակի բարձրացումը և քաղաքական իրավիճակի բարելավումը: Ըստ հայ տնտեսագետներ Զ. Թադևոսյանի, Կ. Հակոբյանի, Դ. Գալոյանի և Լ. Աղաջանյանի՝ ՀՀ-ում էմիգրանտների մեծ մասը տնտեսական միգրանտներ են, որոնք Հայաստանից մեկնում են աշխատանք և բարեկեցիկ կյանք որոնելու[4]: Ըստ այդ հեղինակների միայն միգրացիայի ճիշտ կառավարումը կմեղմի արտագաղթը և կապահովի դրական ազդեցություն թե՛ ընդունող, թե՛ ուղարկող երկրի տնտեսության վրա:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդի-սացել ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով 2018-2022թթ. ժամանակահատվածի համար ստացված տվյալները, ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներով 2018-2021թթ. տվյալները: Ուսումնասիրվել են միգրացիայի 2024 թվականի համաշխարհային զեկույցը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) 2018 թ. հրապարակված «Տարածաշրջանները մի հայացքով - 2018» զեկույցը, Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (ԸՄՊ) 2018-2021 վերլուծական զեկույցը, տարբեր իրավական նորմեր: Օգտագործված են նաև ՄԱԿ-ի, ՄՄԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից հավաքագրված և հրապարակված տվյալները:

Վերլուծություն: 21-րդ դարը կարելի է համարել միգրացիայի դար, քանի որ երբևէ այս երևույթը քաղաքական, տնտեսական և հասարակական նման հնչեղություն չէր ստացել: Մի շարք երկրներում, երբ պետությունների միջև խորացավ միջազգային մրցակցությունը, և ակտիվացավ «գլոբալ տաղանդների» որոնումը, միջազգային ներգաղթը դարձավ կարևոր քաղաքական լծակ նաև պետական կարգավորման հզոր զինանոցում:

Պետությունների այսպիսի մոտեցումների արդյունքում աշխարհում միջազգային միգրանտների թիվը 1990-2022 ժամանակահատվածում 84 միլիոնից աճել է մինչև 281 միլիոն, նրանց մասնաբաժինն աշխարհի ընդհանուր

համադրումներ, 2016,էջ 9, 142 էջ
http://publishing.ysu.am/files/Migration_Risks_and_Human_Capital_Reproduction.pdf

[4] Թադևոսյան, Զ., Հակոբյան, Կ., Գալոյան, Դ., Աղաջանյան, Լ.. Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ. «Ամբերդ» մատենաշար N4. ք. Երևան, «Տնտեսագետ», 2014,67 էջ, doi: 10.52174/29538114_2023.2-143:

բնակչության թվաքանակում 2.3 տոկոսից աճել է՝ կազմելով 3.6 տոկոս[5]: Ապաստան հայցողների թիվը 2020 թվականի 4.1 միլիոնից աճելով 2022 թվականին կազմել է 5.4 միլիոն՝162 երկրներում գրանցելով գրեթե 2.9 միլիոն ապաստանի միջնորդություն, ինչը 83%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից[6]:

Միջազգային միգրանտների աճող մասնաբաժնով հզոր երկրները շարունակում են լինել (օրինակ՝ Արաբական Միացյալ Էմիրաթներում միգրանտների մասնաբաժինը 1990թ.-ին 71%-ից 2019թ-ին հասել է 88%-ի) շահեկան վիճակում: Մինչդեռ մյուս երկրները բախվում են աճող արտագաղթի և ծնելիության անկման հետ, ինչը հանգեցնում է «ապաբնակեցման» խնդիրների (օրինակ՝ Լատվիայում, Լիտվայում և Բոսնիա և Հերցեգովինայում 2009 թվականից ի վեր բնակչության թիվը նվազել է ավելի քան 10%-ով):

Միգրանտների աճող փոխանցումներն աշխարհում աղքատության հաղթահարման գործոն են համարվում: Դրամական փոխանցումների ծավալը աշխարհում տեսանելի դարձավ 2020թ. COVID-19 ժամանակահատվածում, երբ բազմաթիվ սահմանափակումների պատճառով փոխանցման ֆինանսական ուղիները միայն պաշտոնական էին: Վերջին տարիներին միջազգային դրամական փոխանցումների ծավալի աճի միտում է գրանցվում: Փորձագետների գնահատմամբ այն 2000 թվականի 128 մլրդ ԱՄՆ դոլարից 2022 թվականին հասել է մինչև 831 միլիոն ԱՄՆ դոլարի: Ցուցանիշը 2020-2021թթ զգալիորեն աճել է՝ 717 մլրդ ԱՄՆ դոլարից կազմելով 791 մլրդ ԱՄՆ դոլարի[7]: Իրավիճակի մեղմվելուց հետո 2021-2022թթ. կանխիկ դրամական մուտքերը 599 մլրդ ԱՄՆ դոլարից աճելով 8%-ով, կազմել են 647 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը զգալիորեն գերազանցում է միջազգային օգնության ծավալը[8]:

Դրամական փոխանցումներ ստացող աշխարհի խոշորագույն երկրների հնգյակում են Հնդկաստանը (111 մլրդ ԱՄՆ դոլար), Մեքսիկան, Չինաստանը, Ֆիլիպինները և Ֆրանսիան: Միջազգային դրամական արտահոսքի հիմնական աղբյուր են հանդիսանում բարձր եկամուտ ունեցող երկրները: Տասնամյակներ շարունակ աշխարհում առաջնային տեղ է զբաղեցնում ԱՄՆ-ն, որի մասնաբաժինը ընդհանուրում 2022 թվականին կազմել է 79.15 մլրդ ԱՄՆ դոլար, հաջորդ քառյակում են՝ Սաուդյան Արաբիան (39.35 մ մլրդ ԱՄՆ դոլար), Շվեյցարիան

---

[5]McAuliffe, M., Oucho, L., (eds.), World Migration Report Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), 2024, p. 1. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.

[6] Նույն տեղում, էջ 14:

[7] Նույն տեղում, էջ 36-37:

[8] Նույն տեղում, էջ 37 McAuliffe, M. and L.A. Oucho (eds.). World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), 2024, p. 37. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.

(31.91 մլրդ ԱՄՆ դոլար) և Գերմանիան (25.60 մլրդ ԱՄՆ դոլար): Իսկ առաջին տասնյակում ընդգրկվել են Արաբական Միացյալ Էմիրությունները և Չինաստանը (Համաշխարհային բանկի կողմից դասվում է որպես միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր), որտեղ դրամական փոխանցումների ծավալը 2022 թվականին կազմել է 18.26 մլրդ դոլար: Նպատակամետ պետությունների կողմից իրականացված միգրացիոն քաղաքականությունների արդյունքում ոչ մեծ երկրները, ինչպիսիք են Տաջիկստանը (51%), Տոնգան (44%), Լիբանանը (36%), Սամոան (34%), Ղրղզստանը (31%) և այլն, կախվածության տակ են հայտնվել փոխանցող երկրներից (ՀՆԱ-ի նկատմամբ դրամական փոխանցումների տոկոսային արտահայտությունը)[9]:

Վերջին շրջանում ավելի մեծ թվով գիտնականներ են խոսում այն մասին, որ ներգաղթը, չնայած հանգեցնում է փակուղային այնպիսի հետևանքների, ինչպիսիք են՝ ժողովրդագրական «ճահիճը», միևնույն ժամանակ որպես տարբեր պետությունների տարածքում բնակչության վերաբաշխման բնական գործընթաց, կարող է շատ երկրներ փրկել ժողովրդագրական ճգնաժամից[10]: XX–XXI դդ սահմանագծին Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Օվկիանիայի պետությունները, այդ թվում՝ ԱՊՀ երկրները, բախվում են ժողովրդագրական այնպիսի խնդիրների, ինչպիսիք են ծնելիության անկումը, բնակչության ծերացումը, մասնագիտական որակավորման կորուստը կամ «բարոյական մաշվածքը», կյանքի միջին տևողության կրճատումը: Այդ երկրներ ներգաղթյալների՝ հատկապես երիտասարդների ներհոսքը փոխհատուցում է բնակչության բնական հավելաճի անբարենպաստ շարժընթացը, նպաստում նրա երիտասարդացմանը:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հավաքագրած տվյալներով ամբողջ աշխարհում զգալիորեն աճել է արտերկիր մեկնող ուսանողների թիվը: 2001 թվականին այդ թիվը կազմում էր ավելի քան 2,2 միլիոն մարդ: Հաջորդ տասը տարիներին ցուցանիշը գերազանցել է 3,8 միլիոնը՝ 2021 թվականին նույնիսկ գերազանցելով 6 միլիոնը, ինչը 3 անգամ գերազանցել է 2001 թվականի ցուցանիշը: 2021 թվականին մեկնած ուսանողների 47%-ը կանայք էին, իսկ տղամարդիկ կազմել են 52%-ը[11]:

Փորձագետների գնահատմամբ երիտասարդների այսպիսի մեծ հոսքի նպատակակետ երկրներն են ԱՄՆ-ն (ավելի քան 833.0 հազար ուսանող), Մեծ Բրիտանիան (գրեթե 601.0 հազար ուսանող), Ավստրալիան (մոտ 378.0 հազար ուսանող), Գերմանիան (ավելի քան 376.0 հազար ուսանող) և Կանադան (գրեթե

---

[9] Նույն տեղում, էջ 41-43

[10] Աթոյան, Կ., Միջազգային միգրացիային ազդեցությունը երկրի տնտեսության վրա, ՀՊՏՀ Բանբեր, 3 (35), 2014, էջ 14:

[11] McAuliffe, M., Oucho, L., (eds.), World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), 2024, p. 40. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.

318.0 հազար ուսանող): Ակնհայտ է, որ միգրացիայի կառուցվածքի «երիտասարդացումը» գրավիչ է զարգացած շուկաների համար, ինչը մրցակցային մարտահրավերներ է առաջացնում տվյալ երկրի ներսում, քանի որ հայրենի երկրից «հուսախաբ» երիտասարդ մասնագետներն առավել արագ են արձագանքում արտաքին նյութական ազդակներին, ավելի ճկուն կողմնորոշում ունեն մասնագիտական վերարտակավորման, աշխատանքային գործունեություն ծավալելու ճանապարհով իրենց կարերիայի աճն ապահովելու խրթին հարցերում: Զարգացող հյուրընկալող երկրներում «էժան ճանապարհով» որակավորված աշխատուժը տնտեսության մեջ ներքաշելու միտումը ձևավորում է իմիգրացիոն «ձգողական բևեռներ», որտեղ նրանց բաժինը երկրի ընդհանուր թե՛ աշխատուժի մեջ, թե՛ վերարտադրողական ներուժի մեջ կազմում է գերակշիռ մաս: Ավելին, օրինակ՝ նավթարդյունահանող երկրները (Պարսից ծոցի ավազան)՝ Քուվեյթ, Քաթար, Բահրեյն, Սաուդյան Արաբիա, Միացյալ Արաբական Էմիրաթներ, իսկ Սինգապուրում զբաղվածների ընդհանուր թվի 11%-ը Մալայզիայից, Ֆիլիպիններից, Ինդոնեզիայից, Թաիլանդից եկած աշխատողներն են: Հարավաֆրիկյան Հանրապետությունում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում ներգաղթածները կազմում են բնակչության 5%-ը:



Գծապատկեր 1. Միջազգային միգրանտները, ըստ սեռի, 2000-2020 թվականներ[12]

Ներգաղթածների բաժնով առանձնանում են նաև Եգիպտոսը, Հորդանանը, վերջին տարիներին՝ Ռուսաստանը, Հարավային և Կենտրոնական Եվրոպայի երկրները: Արտագաղթ ծնող բոլոր գլխավոր գործոնները (աղքատություն, գործազրկություն, ցածր եկամուտներ, անվստահություն, խտրականություն, անարդարություն և այլն) այս կամ այն չափով պայմանավորված են նաև գենդերային խտրազատման հետևանքներով: Միջազգային փորձագետների գնահատմամբ, 1990-ից միջազգային կին միգրանտների թիվն անշեղորեն աճել է, աստիճանաբար վերացնելով այն կարծիքը, որ աշխատանքային միգրացիան տարածված երևույթ

[12] McAuliffe, M. and L.A. Oucho (eds.). World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), 2024, p. 168. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.

է միայն տղամարդկանց համար: Որոշ երկրներում բնակչության ծերացումը, բարեկեցության կրճատումը, տնտեսության թվայնացումը հանգեցրել են միգրանտ տնային աշխատողների պահանջարկի աճի, որտեղ ավելի շատ զբաղ-ված են լինում կանայք, որով, ենթադրում ենք, պայմանավորված է միգրացիայի այս միտումը:

Միգրացիայի 2024թ. համաշխարհային զեկույցում նշվում է, որ 2000թ. միգրանտ կանանց մասնաբաժինը(գծապատկեր 1)49.4%-ից նվազել ու 2020-ին կազմել է 48.1%[13]: Պատկերը ձևավորվում է հիմնականում դեպի Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկա կանանց արտագաղթի աճով (ԱՄՆ-ում աշխատատեղերի 37%-ը կարող է զբաղված լինել տնային պայմաններում)[14]: Իսկ տղամարդկանց արտագաղթը ավելի մեծ է դեպի Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա[15]:

Միջազգային միգրացիայի կառավարման գործընթացը նոր որակավորում ստացավ 2003-2022թթ ընթացքում: Այդ իրադարձությունների և կայունացման մեխանիզմների ժամանակագրությունը ներկայացված է ստորև.



Գծապատկեր 2. 2003-2022 թթ. առանցքային իրադարձություններն ու գործընթացները միջազգային միգրացիայի կարգավորման ոլորտում[16]

2022 թվականից ՄԱԿ-ի կողմից միգրացիայի օրակարգային խնդիրները լուծելու համար շահագրգիռ կողմերի հետ մշակվում են համակարգային

[13] Նույն տեղում, էջ 168
[14] Նույն տեղում, էջ 14
[15] Նույն տեղում, էջ 14
[16] McAuliffe, M., Oucho, L. (eds.), World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), 2024, p. 228. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.

ցուցանիշներ: ՄԱԿ-ի նոր ռազմավարական 2024-2028 թվականների ծրագրում առաջնային է օրինական միգրացիայի նոր ուղիների կառավարումը[17]: Պրահայի գործընթացի գործողությունների 2023-2027թթ. ծրագրում կարևորվել է միգրացիոն ծառայությունների թվայնացումը[18]:

Բացի համաշխարհային հանրության համար մարտահրավեր դարձած ՔՈՎԻԴ-19 համավարակից, 2018-2023թթ Հայաստանը բախվեց Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի պատերազմական գործողություններին դիմակայելու, Արցախից հայերի բռնի տեղահանման հետևանքներին արձագանքելու անհրաժեշտությանը, որը մեծապես ազդեց միգրացիոն քաղաքականության առաջնահերթությունների վրա:

ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական վիճակագրությունը սահմանահատումների տեղեկություններով ներկայացնում է երկրից մեկնողների և ժամանողների հաշվեկշիռը, որը տարիներ շարունակ բացասական մնացորդ ունի:

Աղյուսակ 1

ՀՀ սահմանահատումների ծավալներն ըստ տարիների (մլն. մարդ) 2015-2022թթ.[19]

Տարեթիվը	Ժամանել են	Մեկնել են	Սալդո
2015	2.71	2.75	-0.04
2016	2.87	2.92	-0.05
2017	3.4	3.43	-0.03
2018	3.76	3.74	-0.02
2019	4.32	4.31	0.01
2020	0.91	0.9	0.01
2021	1.63	1.67	-0.04
2022	3.39	3.36	0.03

[17] Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) 2024, Միգրացիայի կառավարման ցուցիչներ 2023- Հայաստանի Հանրապետություն. ՄՄԿ, Ժնև,էջ 1-30, https://publications.iom.int/system/files/pdf/pub2024-051-el_mgi_armenia-armenian.pdf

[18] Lysak, I., Hodgson, G., Exploring the Potential of Digitalisation in Migration Management in the Prague Process Region. Prague Process, International Centre for Migration Policy Development (ICMPD), Vienna. 2024, p.7. Retrieved from: https://www.icmpd.org/file/download/60999/file/PP_Digital%2520Solutions%2520Report_EN%2520final.pdf. Date of access: September 5, 2024

[19] ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (2022թ.). Սահմանահատումների քանակը 2022 թվականին հունվար–մարտ ամիսներին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների, https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2022.arm.pdf:

Աղյուսակ 1-ի տվյալները խոսում են բացառապես սահմանահատումների, այլ ոչ միգրացիոն հոսքերի մասին, այդուհանդերձ կարելի է ենթադրել, որ 2021թ.-ի բացասական սալդոն մեծապես պայմանավորված էր ՔՈՎԻԴ-19-ի բերած իրողություններով (ինչպես օրինակ՝ Հայաստան ժամանակավորապես այցելած և 2020թ.-ին Հայաստանից մեկնել չկարողացած անձանց վերադարձն իրենց մշտական բնակության երկրներ, հայաստանցի սեզոնային միգրանտների արտահոսքը, ովքեր 2020թ.-ին չէին կարողացել մեկնել արտագնա աշխատանքի, և այլն), ինչպես նաև 2020թ.-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի և 2021թ.-ին շարունակվող ագրեսիայի հետևանքով Հայաստանի անվտանգային միջավայրի վատթարացմամբ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներով 2018-2021թթ. Հայաստանն ընդունել է միջինում տարեկան 10,780 իմիգրանտ, իսկ նույն ժամանակահատվածում Հայաստանից արտերկիր է մեկնել միջինում տարեկան 19,380 էմիգրանտ, ընդ որում գնահատականները ներառում են թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ միգրանտներին: Միգրացիայի մնացորդը վերջին տասը տարիներին առաջին անգամ դրական է եղել, ու թեև կրկին նվազել է սահմանափակումների վերացմանը զուգահեռ, 2021թ.-ի ցուցանիշը 2017թ.-ի համեմատ բարձր էր շուրջ 6 անգամ[20]: Գաղտնիք չէ, որ արտաքին միգրացիայի բացասական հաշվեկշիռը խոչընդոտում է երկրի թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական զարգացմանը, ինչն իր հերթին ենթադրում է համարժեք քաղաքականության իրականացման անհրաժեշտություն՝ միգրացիոն հոսքերի վերահսկման, անկանոն միգրացիայի կանխարգելման, աշխատուժի ու կապիտալ հոսքերի արդյունավետ կառավարման, միգրանտների վերադարձի, խթանման, ինչպես նաև միգրանտների իրավունքները պաշտպանելու տեսանկյունից:

Բարձր աշխատավարձի և սոցիալական վիճակի բարելավման ձգտումը ևս էմիգրացիոն որոշումների հիմք է: Կարծում ենք, 2018-2022թթ Հայաստանի տվյալները փաստում են սոցիալական դրդապատճառներով ընթացող միգրացիայի հավանականությունը[21]: Հայաստանից արտագաղթի պատճառներից գլխավորը զբաղվածության հիմնախնդրի (աշխատատեղերի), մասնագիտական աշխատանքի բացակայության, արժանավայել ապրուստ ապահովող վարձատրությամբ հնարավորությունների պակասն է:

---

[20] Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021) 2021, Երևան, 7 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf :

[21] Waddington, H., Rachel, R., How does poverty affect migration choice? A review of literature. Working Paper T3. Institute of Development Studies, Sussex, 2023, pp. 10-18. Retrieved from: https://www.sussex.ac.uk/Units/SCMR/drc/publications/working_papers/WP-T3.pdf. Date of access: September 5, 2024

Աշխատանքային ռեսուրսների տարիքային կառուցվածքի ուսումնասիրությունը(աղյուսակ 2) ցույց է տալիս, որ ավելի շատ նվազման միտում ունեն 15-24 և 25-34 տարիքային խմբերը, այնուհետև նվազում է նկատվում 45-54 տարիքային խմբում: 2022-ին 2016թ-ի համեմատ երիտասարդների թիվը նվազել է 23%-ով: Բերված տվյալները խոսում են երիտասարդների շրջանում միգրացիոն վարքագծի ակտիվացմամբ ու ցայտուն դրսևորմամբ:

Աղյուսակ 2.

ՀՀ աշխատանքային ռեսուրսներն ըստ տարիքի (միջին տարեկան, 1000 մարդ) [22]

	2018	2019	2020	2021	2022
Ընդամենը	2,196,4	2,201,1	2,200,0	2,227,1	2,228,5
15-24	380,7	351,8	341,6	342,3	331,9
25-34	474,1	463,3	417,7	428,7	418,5
35-44	368,6	392,0	412,6	378,9	428,2
45-54	351,0	346,2	332,7	336,6	336,5
55-64	446,0	449,7	463,6	480,7	462,8
65-74	176,1	198,1	231,9	260,0	250,4

Տարիներ շարունակ միգրանտների շրջանում ձևավորվել է այն համոզմունքը, որ բարեկեցիկ կյանքի համար նպաստավոր պայմաններն ու հնարավորությունները կարող են բավարարվել ՀՀ-ից դուրս: Այս համոզմունքը կարող է հանգեցնել միգրացիոն զարգացումների բացասական էֆեկտի: Այն է՝ ժողովրդագրական ցուցանիշների անկում, աշխատանքային ռեսուրսների կորուստ, բարձրակարգ մասնագետների արտահոսք և այլն: Այսպես, ըստ Եվրոստատի տվյալների, 2018-2021թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա վերջում ԵՄ և ԵԱԱԸ երկրներում բնակվելու վավեր թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիների 90%-ից ավելին ունեին երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետով) բնակվելու թույլտվություններ[23]: Իսկ համաձայն ՌԴ ներքին գործերի նախարարության հրապարակումների, 2017-2019թթ. Ռուսաստանում միգրացիոն հաշվառման վերցված ՀՀ քաղաքացիների թիվը դանդաղ նվազման միտում է ունեցել (տարեկան 1-2%ով), իսկ 2020թ.-ին՝ ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված, նվազել է շուրջ 43%-ով: 2021թ.-ի ընթացքում Ռուսաստանում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը կրկին զգալիորեն աճել է, սակայն նախաճգնաժամային 2019թ.-ի համեմատ ՌԴ-ում հաշվառվել է շուրջ 9%-ով պակաս ՀՀ քաղաքացի: Հատկանշական է, որ 2017-2020թթ. ավելի զգալի

[22] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Վիճակագրական տարեգրքեր, 2020, 2021, 2022, 2023, համապատասխան էջեր՝ 73, 74, 79, 86, ք. Երևան, 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ.

[23] Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021) 2021, Երևան, 29 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf :

տեմպերով կրճատվել է տարվա ընթացքում Ռուսաստանում հաշվառված և հաշվառումից դուրս եկած ՀՀ քաղաքացիների թվի տարբերությունը: Նույն աղբյուրի համաձայն, 2018-2021թթ. ՀՀ քաղաքացիների 7-10%-ն է միայն Ռուսաստանում հաշվառվել ըստ բնակության վայրի, իսկ ճնշող մեծամասնությունը՝ ըստ գտնվելու վայրի: Վերջիններս միգրացիոն հաշվառման են վերցվել առավելապես աշխատանքի կամ մասնավոր այցի հիմքով: 2021թ.-ին ՌԴ-ում աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական պայմանագրի կնքման ծանուցում է ներկայացրել 138 946 ՀՀ քաղաքացի: ՌԴ միգրացիոն հոսքում ավանդաբար գերակշռում են ժամանակավոր աշխատանքային միգրանտները, իսկ դեպի ԵՄ և ԵԱԱԸ պետությունների միգրացիոն հոսքում ավելի զգալի է երկարաժամկետ միգրանտների կշիռը: Ընդ որում ընտանեկան հանգամանքների բերումով բնակվելու թույլտվություն ձեռք բերածները մինչև 2021թ. զգալիորեն ավելի մեծ կշիռ են ունեցել, որը լուրջ հարված է ժողովրդագրության վրա: Եվրոստատի տվյալների շտեմարանի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ 2021թ.-ի տարեվերջի դրությամբ 2017թ.-ի տարեվերջի համեմատ շուրջ 15%-ով աճել է ԵՄ և ԵԱԱԸ երկրներում բնակվելու վավեր թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը և տարվա ընթացքում առաջին անգամ ԵՄ և ԵԱԱԸ երկրներում բնակվելու թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիների թիվը 2021թ.-ին 2017թ.-ի համեմատ աճել է շուրջ 17%-ով[24]:

ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով 2021թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած միգրանտների կազմում կանայք 10.8% են, վերադարձած միգրանտների շրջանում՝ 20.3%, իսկ նոր ժամանածների շրջանում՝ 62.2%: Վերլուծությունը փաստում է նաև, որ 15-49 տարեկանները չվերադարձածների շուրջ 80%-ն են, վերադարձածների՝ շուրջ 70%, իսկ նոր ժամանածների ընդամենը 50%-ը[25]: Այս տվյալները փաստում են, որ թեև Հայաստանի բնակչության թվաքանակի վրա միգրացիոն գործընթացների բացասական ազդեցությունը վերջին տարիներին որոշակիորեն մեղմվել է, սակայն սեռատարիքային կազմի վրա ազդեցությունը շարունակում է պահպանվել: Ազգային անվտանգության այս մարտահրավերներին համապատասխան 2019թ. կառավարությունը հռչակեց Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական ռիսկերի կրճատման գերակա նպատակը՝ միգրացիոն քաղաքականության օրակարգ

[24] Նույն տեղում, էջ 29

[25] ՀՀ ՎԿ, Միգրացիոն պատկերը ՀՀ-ում 2021 թվականին (ըստ 2021թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների), ք. Երևան, 2023թ., էջ 9:

բերելով նաև միգրացիայի ժողովրդագրական ազդեցությունների կառավարումը[26]:

ՀՀ կենտրոնական բանկի հրապարակումների համաձայն, դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների ծավալը 2018թ.-ին՝ 3% նվազում, իսկ 2019թ.-ին՝ 3% աճ գրանցելով 2017- 2019թթ. գրեթե չի փոխվել՝ կազմելով տարեկան միջինում մոտ 1.48 միլիարդ ԱՄՆ դոլար[27]: Հուսադրող է ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների ներհոսքը 2014-2023թթ ժամանակահատվածում (գծապատկեր 3): 2014-2023թթ փոխանցվել է ընդամենը 25.7 մլրդ ԱՄՆ դոլար, որից 13.9-ը ոչ առևտրային նպատակով, նույն ժամանակահատվածում դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է 10.4 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդհանրապես ռեցիպիենտ երկրներում դրամական փոխանցումների ներհոսքի 1% աճը կապված է 2 % տնտեսական ակտիվության բարձրացման հետ[28]: 2022-ին Հայաստանում այն կազմել է ՀՆԱ-ի 24.7 %, 2023-ին 23.5%, մեկ բնակչի հաշվով այն կազմել է 2022-ին 748.8 հազար դրամ և 2023-ին 754.4 հազար դրամ: ՀՀ դրամական փոխանցումներում գերակշռում է ՌԴ-ի մասնաբաժինը, քանի որ ՀՀ միգրանտները կենտրոնացված են հիմնականում ՌԴ-ում: Այսպես միայն ՌԴ-ից փոխանցվել է 3 մլրդ 589մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նկատմամբ աճել է ավելի քան 4 անգամ և կազմում է ընդհանուր դրամական փոխանցումների 69.3 %-ը[29]:

Մեր կարծիքով հանրապետություն մուտք գործող դրամական փոխանցումները ռուս-ուկրաինական հակամարտության բացասական հետևանքների պատճառներով կնվազեն, ու կավելանա վերադարձողների քանակը, իսկ էմիգրանտների կողմից կուտակված խնայողությունները պետք է դիտվի որպես արտարժույթի ստացման, հետագայում՝ ներդրումների աղբյուր: Ահա թե ինչու

---

[26] ՀՀ միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին որոշում N 801-Լ, առ. 20 մայիսի 2021 թվականի, էջ 6, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/05/801_2.pdf

[27] ՀՀ ԿԲ-ի «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումներ (արտահայտված ԱՄՆ դոլարով)», առցանց տվյալների բազա, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

[28] Atoyan, R., Christiansen, L., Dizioli, A., Ebeke, Ch., Ilahi, N., Ilyina, A., Mehrez, G., Qu, H., Raei, F., Rhee, A., & Zakharova, D. (2016). Emigration and Its Economic Impact on Eastern Europe, IMF Staff Discussion Note SDN/16/07, Washington, DC: International Monetary Fund. p. 7. Retrieved from: https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2016/sdn1607.pdf. Date of access: September 5, 2024

[29] ՀՀ ԿԲ-ի ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումներ (արտահայտված ԱՄՆ դոլարով), առցանց տվյալների բազա, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

շատ երկրներ տնտեսական օգուտներ ստանալու համար վարում են արտագաղթի ճկուն քաղաքականություն, արտերկրում կուտակված խնայողությունները հայրենիքում ներդնելու համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ աշխատուժի արտահանման արդյունավետությունը բավականին գերազանցում է ապրանքների ու ծառայությունների արտահանման արդյունավետությանը, ինչը պետք է հաշվի առնվի մեր պետության կողմից իրականացվող միգրացիոն քաղաքականության մեջ՝ միգրացիայի դրական ազդեցության ուժեղացման տեսանկյունից:



Գծապատկեր 3. Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալը 2014-2023թթ. (մլդ ԱՄՆ դոլար)[30]

Ներկայումս ՀՀ-ում իրականացվում է նաև «Հայաստանի Հանրապետության վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիրը», ինչպես նաև՝ Միգրացիոն ծառայությունը միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ 2019 թվականից աջակցում է տեղեկացված և զգույշ միգրացիոն վարքագծի ձևավորմանը, որն առաջին հերթին նպատակաուղղված է Հայաստանից սկիզբ առնող անօրինական միգրացիայի կանխարգելմանը՝ բնակչության շրջանում էմիգրացիայի բացասական հետևանքների և ռիսկերի մասին տեղեկացվածության բարձրացմամբ[31]: 2015-ին Հայաստանի Հանրապետությունը, որդեգրելով ՄԱԿ-ի բանաձևով ամրագրված կայուն զարգացման նպատակները, պարտավորվեց դրանք իրականացնել մինչև

[30] ՀՀ ԿԲ-ի ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումներ (արտահայտված ԱՄՆ դոլարով), առցանց տվյալների բազա, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

[31] Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021) 2021, Երևան, 32 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf :

2030 թվականը: Միգրացիայի ներառումը ԿԶՆ-ներում կարևոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս խթանելու միգրացիայի և զարգացման օրակարգը և ստեղծել դրական արդյունքներ երկրներում հենց իրենց՝ միգրանտների համար: ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներում առանձնացվում է գլոբալ գործընկերությունը: 2015-ից անդամակցելով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին՝Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց անդամ պետությունների տարածքում ապահովելու աշխատանքի միասնական շուկա և աշխատուժի ազատ տեղաշարժ:

Միգրացիան կարգավորող հայաստանյան օրենսդրությունը մեկ առանձին իրավական ակտում ամփոփված չէ: Միգրացիայի տարբեր ասպեկտներով զբաղվում են մի շարք պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական և միջազգային կազմակերպություններ, սակայն այդ մարմինների լիազորություններն, երբեմն, համընկնում են, և իրականացված միջոցառումները կորցնում են ակնկալվող արդյունավետությունը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սահմանում է օտարերկրացիների յուրաքանչյուր կատեգորիայի համար աշխատաշուկա մուտք գործելու պայմանները և պատասխանատուն է դրա համար, ինչը սահմանված է նաև ՀՀ ներքին գործերի նախարարության գործառույթներում:

Կառավարության վարած միգրացիոն նպատակային քաղաքականությունը կարևորում է հայրենիք վերադարձողների ներհոսքը ու հայրենիքից արտահոսքի կանխումը, որի համար առաջարկում ենք.

1. միգրացիոն ծառայությունների տրամադրումը մեկ միասնական կառույցի կողմից կապահովի միգրացիոն շղթայի բոլոր բաղադրիչների ինտեգրված կառավարումը՝ գնահատումը, տվյալների մշակումը, վերահսկողությունն ու հսկողությունը,

2. օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքում ներգրավելու համար գործատուների համար սահմանել քվոտաներ, հարկային արտոնություններ,

3. վերահսկել բնակվարձերի մակարդակը՝ հարկային օրենսդրությամբ սահմանել եկամտային հարկով չհարկվող շեմ և բարձր դրույքաչափով հարկվող օբյեկտի շեմ,

4. նպաստել աշխատանքային միգրանտների, վերադարձողների և նրանց ընտանիքների անդամների հզորացմանը, կազմակերպել դասընթացներ բիզնեսի պատշաճ և գրագետ կառավարման համար,

5. հայրենիք վերադառնալիս հարկային օրենսդրությամբ դադարեցնել կամ սահմանափակել հարկային արտոնությունները այն էմիգրանտների համար, որոնք 1-2 տարի ժամկետից ավելի են ապրում արտասահմանում՝ խրախուսելով ժամկետում վերադառնալու որոշման կայացումը:

Գիտական նորույթ: Առաջարկվել են պետական կառավարման մարմինների համագործակցության որակի, կառավարման արդյունավետության բարձ-

բացման նոր մոտեցումներ ու ժամանակակից գործիքներ, որոնք կնպաստեն չկորցնել աշխատունակ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսները երկրում ու երիտասարդների վերադարձի և վերաինտեգրման անխոչընդոտ կազմակերպմանը:

Եզրակացություն: Միգրացիոն գործընթացները մի կողմից բացասական, իսկ մյուս կողմից դրական ազդեցություն են ունենում պետությունների տնտեսությունների զարգացման վրա: ՀՀ-ում արտագաղթի կարևոր պատճառ է աշխատանքի որոնումը, անհատի զարգացման, պահանջմունքներն և հնարավորությունները դրսևորելու համար բավարար պայմանների բացակայությունը: Միայն պետական ճիշտ մոտեցումները կնպաստեն ստեղծել դրական արդյունքներ ու օպտիմալ հավասարակշռություն գտնել օգուտների ձեռքբերման և հնարավոր բացասական հետևանքների նվազեցման միջև: Առհասարակ վստահելի ու բարձրորակ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս միգրանտներին ընդունելու տեղեկացված որոշում և խթանում է վերադարձի պատրաստակամությունն ու վերադարձի գործընթացի համար պատասխանատվությունը՝ արդյունքում բարելավելով կայուն վերաինտեգրման հեռանկարը, նաև՝ ընդգծելով գործընթացի միջազգային իրավական կարգավորման դերը ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան, Կ., Միջազգային միգրացիային ազդեցությունը երկրի տնտեսության վրա, ՀՊՏՀ Բանբեր, 3 (35), 2014, էջ 9-18:
2. Թադևոսյան, Զ., Հակոբյան, Կ., Գալոյան, Դ., Աղաջանյան, Լ., Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ. «Ամբերդ» մատենաշար N4. ք. Երևան, «Տնտեսագետ», 2014,168 էջ, doi: 10.52174/29538114_2023.2-143:
3. Մարզպանյան, Հ., Մարկոսյան, Ռ., Խաչատրյան, Ն., Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, 2016, 142 էջ http://publishing.ysu.am/files/Migration_Risks_and_Human_Capital_Reproduction.pdf:
4. Atoyan, R., Christiansen, L., Dizioli, A., Ebeke, Ch., Ilahi, N., Ilyina, A., Mehrez, G., Qu, H., Raei, F., Rhee, A., Zakharova, D., Emigration and Its Economic Impact on Eastern Europe, IMF Staff Discussion Note SDN/16/07, Washington, DC: International Monetary Fund., 2016, 48 p. Retrieved from: https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2016/sdn1607.pdf. Date of access: September 5, 2024.
5. Hall, S. Youth, Migration and Development: A New Lens for Critical Times. KNOMAD Paper No 41, World Bank, Washington, DC, 2021, 58 p. Retrieved from:

https://www.knomad.org/sites/default/files/2022-04/KNOMAD%20Working%20Paper%2041-Youth%20Migration-March%202022.pdf. Date of access: September 5, 2024.

6. Lysak, I., Hodgson, G., Exploring the Potential of Digitalisation in Migration Management in the Prague Process Region. Prague Process, International Centre for Migration Policy Development (ICMPD), Vienna. 2024, 24p. Retrieved from: https://www.icmpd.org/file/download/60999/file/PP_Digital%2520Solutions%2520Report_EN%2520final.pdf. Date of access: September 5, 2024.
7. McAuliffe, M., Oucho L. (eds.), World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), 2024, 384 p. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.
8. Stahl, C., Theories of International Labor Migration: An Overview. Asian and Pacific Migration Journal, 4(2-3), 1995, 232 p. doi:10.1177/011719689500400203
9. Fokkema, T., Haas, H., Pre- and Post-Migration Determinants of Socio-Cultural Integration of African Immigrants in Italy and Spain. International Migration, 53: 2015, 3-26. https://doi.org/10.1111/j.1468-2435.2011.00687
10. Taylor, E., The new economics of labour migration and the role of remittances in the migration process. International Migration (Geneva, Switzerland).,37(1), 1999, 354 p. DOI: 10.1111/1468-2435.00066. PMID: 12322077. Date of access: September 5, 2024
11. Waddington, H., Rachel, R., How does poverty affect migration choice? A review of literature. Working Paper T3. Institute of Development Studies, Sussex, 2023, 22p. Retrieved from: https://www.sussex.ac.uk/Units/SCMR/drc/publications/working_papers/WP-T3.pdf. Date of access: September 5, 2024
12. Internacional Center for Migration Policy Development, Return and Reintegration Facility Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021), Երևան, 2021, 74 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf
13. ՀՀ միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին որոշում N 801-Լ, առ. 20 մայիսի 2021 թվականի, 80 էջ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=152909:
14. ՀՀ ԿԲ-ի «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումներ (արտահայտված ԱՄՆ դոլարով)» առցանց տվյալների բազա, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx:

15. ՀՀ ՎԿ, Միգրացիոն պատկերը ՀՀ-ում 2021 թվականին (ըստ 2021թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների), ք. Երևան, 2023թ., 29 էջ:
16. ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (2022թ.). Սահմանահատումների քանակը 2022 թվա կանին հունվար – մարտ ամիսներին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների, https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2022.arm.pdf
17. ՀՀ ՎԿ, Վիճակագրական տարեգրք 2023. ք. Երևան, 2023թ., 627 էջ:
18. ՀՀ ՎԿ, Վիճակագրական տարեգրք 2022. ք. Երևան, 2022թ., 625 էջ:
19. ՀՀ ՎԿ, Վիճակագրական տարեգրք 2021. ք. Երևան, 2021թ., 609 էջ:
20. ՀՀ ՎԿ, Վիճակագրական տարեգրք 2020. ք. Երևան,2020թ., 599 էջ:
21. Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) 2024, Միգրացիայի կառավարման ցուցիչներ 2023- Հայաստանի Հանրապետություն. ՄՄԿ, Ժնև, 60 էջ, https://publications.iom.int/system/files/pdf/pub2024-051-el_mgi_armenia-armenian.pdf

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը: Միգրացիայի ռիսկերի կոնկրետ դրսևորումները զարգացած երկրներում զգալիորեն տարբեր են զարգացող երկրներում համանման ռիսկերի դրսևորումներից, դրանք նաև չափազանց դժվար կանխատեսելի, դժվար կառավարելի և դժվար հաղթահարելի են: Դրդապատճառները ավանդականից ենթարկվել են բովանդակային փոփոխությունների՝ հանգեցնելով դրական ու բացասական վերջնաարդյունքների, դրանով առաջ բերելով քաղաքականության մշակման ու իրականացման նոր մարտահրավերներ:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է ընդգծել միգրացիայի առաջ բերած մարտահրավերները և կարևորել պետական կողմնորոշվածությունը քաղաքականության իրականացման գործընթացում:

Նպատակի լուծման համար դրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել միջազգային գլոբալ զարգացումների ազդեցությունը միգրացիոն գործընթացներ վրա,
- առանձնացնել միջազգային միգրացիայի առավելություններն ու սպառնալիքները, որոնք ազդում են երկրների տնտեսական և քաղաքական զարգացման վրա.
- ընդգծել գործընթացի միջազգային իրավական կարգավորման դերը ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել միգրացիայի, նրա ազդեցության առանձնահատկությունների ու առանձին երկրների կողմից իրավական կարգավորման վերաբերյալ ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի տարբեր տնտեսագետների աշխատությունները և ինտերնետային կայքեր, միգրացիայի 2024 թվականի համաշխարհային զեկույցը, տարբեր իրավական նորմեր: Օգտագործված են նաև ՄԱԿ-ի, ՄՄԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից հավաքագրված և հրապարակված տվյալները:

Ստացված արդյունքները: Միգրացիոն գործընթացները մի կողմից բացասական, իսկ մյուս կողմից դրական ազդեցություն են ունենում պետությունների տնտեսությունների զարգացման վրա: ՀՀ-ում արտագաղթի կարևոր պատճառ է աշխատանքի որոնումը, անհատի զարգացման, պահանջմունքներն և հնարավորությունները դրսևորելու համար բավարար պայմանների բացակայությունը: Միայն պետական ճիշտ մոտեցումները կնպաստեն օպտիմալ հավասարակշռություն գտնելու օգուտների ձեռքբերման և հնարավոր բացասական հետևանքների նվազեցման միջև: Առհասարակ վստահելի ու բարձրորակ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս միգրանտներին ընդունելու տեղեկացված որոշում և խթանում է վերադարձի պատրաստակամությունն ու վերադարձի գործընթացի համար պատասխանատվությունը՝ արդյունքում բարելավելով կայուն վերաինտեգրման հեռանկարը, նաև՝ ընդգծելով գործընթացի միջազգային իրավական կարգավորման դերը ՀՀ միգրցիոն քաղաքականության մեջ :

Գիտական նորույթ: Առաջարկվել են պետական կառավարման մարմինների համագործակցության որակի, կառավարման արդյունավետության բարձրացման նոր մոտեցումներ ու ժամանակակից գործիքներ, որոնք կնպաստեն առանձնացնել միջազգային միգրացիայի առավելություններն ու սպառնալիքները:

Բանալի բառեր: Միջազգային միգրացիա, ապաստանի հայց, միգրացիոն ռիսկեր, միգրացիոն օգուտներ

ТЕНДЕНЦИИ МЕЖДУНАРОДНОЙ МИГРАЦИИ И ГОСУДАРСТВЕННАЯ ПОЛИТИКА В АРМЕНИИ

ЛИЛИК БЕГЛАРЯН

Аннотация

Актуальность статьи. Конкретные проявления миграционных рисков в развитых странах значительно отличаются от проявлений таких явлений в развивающихся странах, их также трудно предсказать, трудно контролировать и трудно преодолеть. Причины: они изменились с традиционных свойств, что привело к положительным и отрицательным результатам, вдвигая новые научные проблемы.

Цель статьи. Цель статьи – подчеркнуть проблемы миграции и важность процесса принятия решений государства в реализации политики.

Для решения данной цели были поставлены следующие задачи:

• определить влияние международных глобальных событий на миграционные процессы,

• выделить преимущества и угрозы международной миграции, которые влияют на экономическое и политическое развитие стран,

• подчеркнуть роль международно-правового регулирования процесса в миграционной политике РА.

Методология. Теоретической основой исследования послужили работы различных отечественных и зарубежных исследователей, статистика миграции, различные правовые нормы. Также данные, собранные и опубликованные ООН, МОМ и другими международными организациями.

Полученные результаты. Миграционные процессы, с одной стороны, оказывают негативное, а с другой-положительное влияние на развитие экономики государств. Важной причиной эмиграции в Армении является поиск работы, отсутствие достаточных условий для развития личности, удовлетворения потребностей и возможностей. Только правильные государственные подходы помогут найти оптимальный баланс между положительных возможностей и возможных отрицательных последствий. В целом, надежная и качественная информация предоставляет мигрантам возможность принимать информированные решения и способствует готовности к возвращению, а также ответственности за процесс возвращения, что в итоге улучшает перспективы стабильной реинтеграции. Это также подчеркивает роль международного правового регулирования в миграционной политике Республики Армения.

Научная новизна. Были предложены новые подходы и современные инструменты для улучшения качества сотрудничества государственных органов и

повышения эффективности управления, которые помогут выделить преимущества и угрозы международной миграции.

Ключевые слова. Международная миграция, заявление о предоставлении убежища, миграционные риски, миграционные преимущества.

INTERNATIONAL MIGRATION TRENDS AND STATE POLICY IN ARMENIA

LILIK BEGLARYAN

Abstract

The relevance of the article. The specific manifestations of migration risks in developed countries differ significantly from their analogs in developing countries, they are also extremely difficult to predict, difficult to control, and difficult to overcome.

The purpose of the article. The purpose of the article is to highlight the problems of migration and to emphasize the importance of the decision–making process on the part of the state. In the scope of the research framework the following tasks were set:

- to determine the impact of global events on migration processes,
- to highlight the advantages and threats of international migration that impact the economic and political development of countries,
- to emphasize the role of international legal regulation in the migration policy of Armenia.

Methodology. The theoretical basis of the study was the studies of various foreign and Armenian economists exploring migration, the peculiarities of its influence and legal regulation by individual countries, migration statistics for 2024, and various legal norms. Data collected and published by the UN, IOM, and other international organizations were used.

Main findings. Migration processes, on the one hand, have a negative and, on the other, a positive impact on the development of the economies. An important emigration reason in Armenia is the search for work, the lack of sufficient conditions for personal growth, satisfaction of needs, and opportunities. Only the right government approaches will help to find the optimal balance between obtaining benefits and reducing possible negative consequences. In general, reliable and high-quality information enables migrants to make informed decisions and promotes readiness for return, as well as responsibility for the return process, ultimately improving the prospects for stable reintegration. It also highlights the role of the international legal framework in the migration policy of Armenia.

Scientific novelty. New approaches and modern tools were proposed to improve the quality of cooperation between state bodies and enhance management efficiency, which will help identify the advantages and threats of international migration.

Keywords. International migration, asylum application, migration risks, migration benefits.